«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ռազմահայրենասիրական դաստիարակությունը դպրոցում
ԱՌԱՐԿԱ	ՆԶՊ
ՀԵՂԻՆԱԿ	Քիթոյան Սեդրակ
ՄԱՐԶ	ՇԻՐԱԿ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	«Փոքր Մանթաշի Հ. Սուքիասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն ----------2

2.Հայրենասիրական դաստիարակություն…….3

3.Դպրոցականների հայրենասիրական դաստիարակություն……7

4.Եզրակացություն…….16

5.Գրականություն……..18

1. Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ՝ Աշակերտների մեջ ձևավորել, զարգացնել և որակապես բարձրացնել անհրաժեշտ որակներ.

- առաքինություն
- հայրենասիրություն,
- պատվասիրության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ Դասապրոցեսում ներկայացնել

- ինչ է ռազմահայրենասիրական դաստիարակությունը ,
- գնահատել և արժևորել բնօրրանը՝ Հայրենիքը,
- նպաստել աշակերտների, ինքնուրույն մտածողության զարգացմանը, աշխարհայացքի, հայրենասիրկան որակների ձևավորմանը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ՝ Զրույցների, քննարկումների և համեմատական վերլուծության միջոցով զարգացնելով հայրենասիրության որակը, ինքնուրույն մտածողությունը, հասնել նրան , որ աշակերտը կարողանա գնահատել, սիրել և պաշտպանել իր հող ՀԱՅՐԵՆԻՆ: Հայրենասիրության օբյեկտը միանշանակ թանձրացված Հայրենիքն է իր ամբողջ էությամբ ու բովանդակությամբ:

Մեր բնօրրան-հայրենիքը, նախախնամության կամքով գտնվելով արևելք արևմուտք, հյուսիս-հարավ հանգուցակետում, ունեցել է ռազմաքաղաքական մեծ նշանակություն և բոլոր դարաշրջաններում անխտիր գայթակղության քար է դարձել աշխարհակալությունների համար: Եվ ահա այս ժողովրդին՝ Հայկական բարձրավանդակի բնիկ տիրոջը, վիճակված էր անդադրում պատերազմել տարբեր և տարաբնույթ ավարառուների, ջարդարարների և նվաճողների հետ: Հանգամանք, որը մշտապես կոփել է հայ զորականի ռազմավարական և մարտավարական որակները:

Բանակն ու դիվանագիտությունը՝ որպես պետականության առաջմղիչ ուժեր, մշտապես կապված են միմյանց: Դա հասարակական-պատմական օրինաչափություն է: Եթե մենք մի փոքր շրջահայաց լինենք մեր ազգային արժեքների գնահատման գործում, ապա մեզ համար կպարզենք, որ մեր նախնիները այլևայլ հավատամքների և փառաբանումների հետ միասին ունեցել են նաև զենքի

պաշտամունք՝ գիտակցելով, որ ստեղծագործածը կարող է գոյատևել միմիայն զենքի միջոցով: Զենքի փառաբանումը հայ մարդու համար սկսվում էր նրա օրորոցայինով և ուղեկցում էր նրան ողջ կյանքի ընթացքում:

Երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը ներկայիս հրատապ խնդիրներից մեկն է: Դա բարոյական եւ հայրենասիրական կրթություն է, որը ամբողջ հանրային գիտակցության հիմնական բաղադրիչն է: Հայրենասիրական բնույթի զգացմունքները դրված են ողջ կյանքի և մարդկության առկայության վրա՝ որոշակի սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցության ներքո: Երեխաների դաստիարակությունը պետք է իրականացվի անընդհատ, դասարանում, գործողություններում, նույնիսկ խաղի մեջ և տանը:

Հայրենասիրությունը ծագում է լատիներեն «պատրիոտ» բառից, նշանակում է հայրենիքը սիրող: Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է: Այն սոցիալական դիրքորոշում է, որի հիմնական բաղադրիչը սերն է: **Մարդու հայրենասիրությունը հանդես է գալիս և մարմնավորվում տվյալ մարդու (դպրոցականի)՝ դեպի իր հայրենիքը ունեցած սիրո մեջ: Սերը ոչ միայն հայրենիքի նկատմամբ է, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ: Երբ ասում ենք հայրենիք, ապա առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող ժողովուրդը:**

ՆԶՊ առարկայի նպատակն է ծառայել որպես նախապատրաստական ազդակ ռազմական ասպարեզ մուտք գործելու շեմին, որպես հիմնավորում այն իրողության, որ ազգապահպան այլևայլ խորհրդանիշներից ամենից առաջ ազգը պետք է ունենա ռազմական կարողություն և ռազմական հնարավորություններ՝ ազգային մնացած հատկանիշները պահելու և պահպանելու համար: Մեծ նշանակություն ունի բանակը, ռազմական ուժը պետության գոյապահպանման համար: Խիստ կարևոր է բանակի դերը ազգային խնդիրների իրագործման ճանապարհին :

Հայրենիքը պաշտպանելու սուրբ գաղափարը շատ հին է հայոց կյանքում: Ըստ էության՝ հենց հայրենիքի պաշտպանության դրվագով էլ բացվում է հայոց պատմությունը: Խոշաբի ճակատամարտից առաջ, որը տեղի է ունեցել Ք.Ա. 2492 թվականի օգոստոսի 11-ին /այստեղից էլ սկսվում է բուն հայոց տոմարը/,իր զինվորներին ուղղված կոչի մեջ Հայկը՝ հայոց զորապետը, հռչակում է հայրենիք ունենալու և այն պահպանելու միակ և անողոք պայմանը՝ «Մահ կամ ազատություն»:

2.Հայրենասիրական դաստիարակություն

Ժամանակի մարտահրավերներին համարժեք պատասխան տալու համար, պետությունն առաջին հերթին պետք է հենվի լավ կրթության վրա, քանի որ վերջինս՝ օժտված է ներքին ազատությամբ,

մեծահոգությամբ, անձնվիրությամբ, հայրենասիրությամբ ու բարոյական արժեքներով, պետք է ձևավորի ստեղծագործող անհատ: Անժխտելի է, որ հայրենասիրությունը հանդիսանում է ազգի, ժողովրդի, հասարակության, պետության, սոցիալական հանրույթի, անհատի գոյատևման անբաժանելի բաղադրիչը:

Ռազմահայրենասիրական դաստիարակության առաջին քայլերն անհրաժեշտ է սկսել դեռևս նախադպրոցական տարիներին, իսկ առավել գիտակցված և կայուն գիտելիքներ պետք է տան դպրոցը և բուհը:

Անուրանալի է դպրոցի դերը, որտեղ երեխան անցկացնում է իր կյանքի կարևորագույն տարիների մի մասը և հենց այդ տարիներին էլ նա դառնում է սեռահասուն, առավել գիտակից, ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակ և որոշակի արժեքներ կրող: Այդ առումով, և՛ ուսուցիչները, և՛ դպրոցի հոգեբանը, և՛, հատկապես, զինղեկը կարևոր առաքելություն ունեն լինելու աշակերտների, ապագա զինվորների մեջ պարտքի, հայրենասիրության, քաջության և բարոյական արժեքների ջատագովը, արթնացնելու համար հանուն հայրենիքի անգամ անձնազոհության գնալու մղումը: Բոլոր ժամանակների և մանավանդ այսօրվա դպրոցի առջև դրված է կյանքի կողմից պարտադրված կարևորագույն խնդիր. այն է՝ դաստիարակել հայրենասեր սերունդ: Արցախի գոյապայքարի, Քառօրյա պատերազմի, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին և 2022թվականի սեպտեմբերի 13-ին սկսված ու շարունակվող պատերազմները և ներկայիս մարտահրավերները ավելի են կարևորում այսպիսի սերունդ ունենալու անհրաժեշտությունը: Այս հարցն ավելի սուր է ներկայանում մեր օրերում, քանզի այսօրվա աշխարհաքաղաքական զարգացումների կիզակետում հայտնված մեր պատմական հայրենիքի՝ ապագան վտանգված է, իսկ վաղվա օրվա հայրենյաց սահմանի պաշտպանն այսօրվա դպրոցականն է ու նրա մեջ հայրենասիրություն սերմանող ուսուցիչը, ով իր անխոնջ աշխատանքով մատաղ սերնդի հոգում դնում է հայրենասիրության ծլարձակող սերմեր, վկան՝ Արցախի քառօրյա և քառասունչորսօրյա, սեպտեմբերի 13-ին սկսված պատերազմները:

Մեծ մանկավարժ Վ. Սուխոմլինսկին մանկավարժական երկարատև տարիների իր գործունեության մասին խոսելիս նշել է. «Երեխաների դպրոց հաճախելու հենց առաջին օրերից ես նրանց հետ միասին սկսում եմ: Ճանապարհորդություններ կատարել դեպի մեր հայրենիքի վեհության, պատվի, փառքի, անկախության համար կատարված սխրանքների աշխարհը»: Հետևելով մեծմանկավարժի պատգամներին՝ կրտսեր դպրոցում աշակերտի հայրենասիրական դաստիարակությունը իրականացնում ենք դաստիարակության կենսագործման

դասարանական և արտադասարանական աշխատանքների զանազան ուղիներով՝ դրական օրինակով, հայրենիքի մասին զրույցներով, գրական ստեղծագործությունների վերլուծություններով, միջառարկայական և ներառարկայական կապեր ստեղծելով և այլն:

- **Կիրառում ենք նաև արտադասարանական տարբեր միջոցառումներ.**

-Արցախյան պատերազմի հերոսների, ռազմական մարտերի մասին ականատեսների վկայություն – հիշողություններ:

- Սովորողները ճանաչում են պատերազմի հերոսներին, ծանոթանում են ռազմական մարտերի մասնակիցների վերապրած հիշողություններին:

- **Էքսկուրսիաների, արշավների իրականացում.**

- Երեխաները ճանաչում են հայրենի բնաշխարհը, սիրում հայրենի հողը,

- **Մասնակցություն ազգային տոներին.**

- Սովորողները ճանաչում են ազգային տոները, անձամբ մասնակցում տոնակատարություններին,

- **Զրույց, դասախոսություն, բանավեճ.**

-Աշակերտները փոխանակում են հայրենասիրական գաղափարներ,հարստացնում են հայրենիքի մասին ունեցած գիտելիքները, բանավեճի արդյունքում կատարում եզրահանգումներ,

- **Պատերազմների թեմաներով կինոդիտում.**

- Փաստավավերագրական ֆիլմերի օգնությամբ աշակերտները ծանոթանում են պատմական փաստերին,

- Հայրենասիրական թեմաներով ցերեկույթներ, վիկտորինաներ. սովորողներն անձամբ մասնակցում են միջոցառումների կազմակերպմանն ու ներկայացմանը. ապահովվում է առողջ մրցակցություն:

Հայրենասիրական դաստիարակության հաջողության գրավականը անմիջականորեն պայմանավորված է հետևյալ ուղղություններով զարգացող համակարգված գործունեությամբ

ա. հայրենապաշտության դաստիարակում,

բ. պետութենամետության դաստիարակում,

գ. ավանդապահության դաստիարակում,

դ. բարեգործության դաստիարակում:

ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Հայրենիքին և ազգին անմնացորդ ծառայելու գաղափարը ՀՀ քաղաքացու արժեհամակարգի առանցքն է: Թերևս ոչ մի երկրում հայրենիքի գիտակցությունն այնքան հստակ և սուր չի դրսևորվում, որքան հայ իրականությունում: Դա բնական է, քանզի հայերը, լինելով Հայկական լեռնաշխարհի բնիկներ ու ճակատագրի բերումով կորցնելով իրենց բնօրրանի մեծ մասը, հայրենատիրության խնդիր ունեն, և դրանից բխում է պատմական հանձնառության առումով ամենազորեղ հատկանիշը՝ հայրենիքի ճակատագրի համար պատասխանատվության գիտակցումն ու ստանձնումը՝ իր ուժերի ու կարողությունների ներդրմամբ:

ՊԵՏՈՒԹԵՆԱՄԵՏՈՒԹՅՈՒՆ

Պետությունը ազգին դարձնում է հզոր, ապահովում նրա անվտանգությունն ու հարատևումը: Հայոց վերաստեղծված պետությունը պետք է դառնա մեր ժողովրդի վերածննդի հիմնական գործոնը՝ նպատակաուղղված համայն հայության Հայաստանա-կենտրոն առաջընթաց զարգացմանը: Պետություն և բանակ հասկացությունները միմյանց պայմանավորող են, և դժվար է պատկերացնել մեկն առանց մյուսի: Հայոց բանակի ստեղծումն ու պատմությունն անքակտելիորեն կապված են մեր պետականության ստեղծման պատմական իրողության հետ: Բանակը, մեր պարագայում՝ Ազգային բանակը, կայուն և զարգացած հայկական պետականության հզորության հիմքն է, հարատևման ամենազորեղ կռվաններից մեկը: Ազգային բանակը մեր պետության անվտանգության երաշխավորն է, հայրենիքի ապահովության առաջին գրավականը: Այս իրողությամբ առաջնահերթ է ազգային գաղափարախոսության արմատավորումը, և այն պետք է խորապես ընկալելի դառնա յուրաքանչյուր հայ քաղաքացու համար, ինչը նրան կմղի մտածելու և գործելու անձնական պատասխանատվությամբ ու պետականգաղափարականությամբ:

ԱՎԱՆԴԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ազգային հոգեկերտվածքի առանձնահատկությունների հենքի վրա ստեղծելով իր գաղափարախոսությունը՝ հայությունը հազարամյակներ ի վեր շարունակել է երթը, պատմության քառուղիներում պահպանելով իր ստեղծարարությունը, հեղինակել անանց արժեքներ, բայց դրա հետ մեկտեղ ճանաչել, հարգել ու գնահատել համամարդկային արժեքները:

Պատմության քառուղիներում կարողացել էպահպանել ոչ միայն իր հավատքը, մշակույթը, լեզուն, այլև իր ազգային ավանդույթները: Այդ առումով էլ ավանդապահությունը պետք է դիտել որպես առաջադիմական երևույթ, որպես ազգային ակունքներից սնվող «առողջ պահպանողականություն», որը չհրաժարվելով անցյալում իր հանրույթի քաղաքակրթական ձեռքբերումներից՝ բնավ չի ժխտում նաև ժամանակակից աշխարհի արժեքները: Ավանդույթի ուժը ոչնչով չի զիջում իրավունքի ուժին, և վերջինիս հավասար ամենուր կարգավորում է հանրային կյանքը:

3.ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ռազմագիտության և նախնական զինվորական պատրաստության դասերի անցկացումը հնարավորություն է տալիս արդեն դպրոցական տարիներին հայ պատանիների մեջ սերմանել հայրենասիրության ոգի, բացի այդ, ռազմական տեխնիկային տիրապետելը, շարային և ֆիզիկական պատրաստության դասերին ձեռք բերված փորձը թույլ են տալիս արդեն զինվորական ծառայության ժամանակ հեշտությամբ հարմարվել բանակային կյանքին:Ռազմահայրենասիրական դաստիարակությունը և գրագետ, հոգեպես ու ֆիզիկապես կոփված, բանակի մասին տեղեկացված ու պատրաստված սերունդ դաստիարակելու գործընթացը մեզանում օրեցօր ավելի է կատարելագործվում: Իսկ արդյունքները տեսանելի են բոլորին: Այս խնդիրների լուծմանը միտված աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու, հանրապետությունում ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրներին լուծում տալու, ինչպես նաև համատեղ միջոցառումների ծրագիր իրականացնելու նպատակով Պաշտպանության, Կրթության և գիտության նախարարությունների կողմից դեռ 2010 թ. դեկտեմբերին մշակված համատեղ ծրագրին մասնակցում են նաև Արտակարգ իրավիճակների, Սպորտի և երիտասարդության նախարարությունները և ՀՀ Ոստիկանությունը: Կառավարության այս տարվա որոշմամբ՝ ընդգրկվել են նաև Մշակույթի և Առողջապահության նախարարությունները: Մեր ազգային դաստիարակության ձեռք է բերվելու ոչ միայն աճող սերնդի կրթությունը մայրենի լեզվով իրագործելով, այլև համամարդկային արժեքներին զուգընթաց ազգային նպատակամղվածության, մշակույթի, ավանդույթների ու սովորույթների պատմության, մշակույթի, ավանդույթների ու սովորույթների յուրացմամբ, կարճ ասած ազգային ոգու, մտածելակերպի, հոգեբանության, վարք ու բարքի արմատավորմամբ, ինչպես նաև յուրաքանչյուր հայորդու ինքնատիպ ու առանձնահատկության դաստիարակմամբ: Հայ ժողովրդի

նոր սերունդները պետք է պատրաստ և ունակ լինեն լուծելու մեր հայրենիքի վերածննդի համար անհրաժեշտ տնտեսական, գիտատեխնիկական, մշակույթային բոլոր տեսակի առաջադրանքները:

Ազգային դաստիարակության հարցում գոյություն ունի երկու իրարամերժ սկզբունք. **Ազգային ինքնատիրապետություն և ազգային բացառիկություն:** Մեր ժամանակներում դաստիարակության հիմնադրույթներից մեկը պետք է լինի ազգային ինքնատիրապետության սկզբունքը, որը, ի տարբերություն ազգային բացառիկության մտածողության, մերժում է ազգայնամոլության ամենափոքր իսկ դրսևորումը և հենվում է այլ ժողովուրդների ազգային արժեքների ու արժանապատվության ճանաչման գիտակցության վրա: Հայ ժողովուրդը պատմական զարգացման ընթացքում ստեղծել է իր ազգային գաղափարախոսության և հոգեբանության, բնավորության ինքնատիպ գծերի մի համակարգ, որով այսօր պետք է օգտվի դաստիարակության բնագավառը: Արտացոլվել են հայ մարդու իդեալական կապերը ներկայացնող հատկություններ՝ սեր և հարգանք աշխատանքի նկատմամբ, խաղաղասիրություն, այլասիրություն (ազատամիտ), հայրենասիրություն, զգացմունքայնություն, բնական մտածողություն, արդարության զգացում, գթասրտություն, գործարար հատկանիշներ, բարեգործություն, հնարամտություն և այլն: Ահա ինքնատիպ հատկանիշների ոչ լրիվ ցանկը, որը պետք է ուղենիշ դառնա ժամանակակից հայեցի դաստիարակության ոլորտում: Ժամանակակից հասարակական կյանքը լրջագույն պահանջներ է ներկայացնում հանրակրթական ոլորտի նոր սերնդի դաստիարակության և ուսուցման խնդիրների լուծման առումով: Պետությանն անհրաժեշտ է առողջ, ուժեղ, նախաձեռնող, կարգապահ, գրագետ երիտասարդներ, ովքեր պատրաստ կլինեն սովորել, աշխատել հանուն իրեն հենց իր անձի, իր ընտանիքի բարօրության, իսկ անհրաժեշտության դեպքում սատար կանգնել նրանց պաշտպանությանը: Հանրակրթության առաջնահերթ խնդիրների շարքում կարևոր դեր ունի սովորողների հայրենասիրական զգացմունքների ձևավորումն ու զարգացումը:

Որպես կանոն, ռազմահայրենասիրական դաստիարակությունը հանրակրթական դպրոցում իրականացվում է համակարգված երեք ուղղություններով.

1) Դաստիրակություն՝ խարսխված ժողովրդի և զինված ուժերի մարտունակության հիման վրա:

2) Ռազմավարական խաղեր:

3) Համագործակցություն դպրոցական և զինվորական կոլեկտիվների, մասնավորապես դպրոցի և զորամասերի, տարածքային զինվորական կոմիսարիատների շրջանակներում:

«Դաստիարակությունը ժողովրդի և զինված ուժերի մարտական ավանդույթների հիման վրա» առաջին ուղղությունն իր մեջ ընդգրկում է հետևյալ միջոցառումները.

-Միջոցառումներ, որոնք ուղղված են հայրենիքի անկախության համար իրենց կյանքը զոհաբերած քաղաքացիների և զինծառայողների հիշատակը անմահացնելուն:

-Հիշատակի օրերի տոնում, ցուցահանդեսների, մրցույթների անցկացում, տեսաֆիլմերի դիտում:

-Ռազմահայրենասիրական երգի մրցույթի կազմակերպում:

Երկրորդ ուղղությունը ենթադրում է գործնական կարողությունների ձևավորում, որը հնարավոր է «Դպրոց-բանակ» համագործակցության միջոցով: Խաղերը նպաստում են սովորողների ֆիզիկական և կամային որակների զարգացմանը, աշակերտական կոլեկտիվի համախմբմանը, համատեղ գործողությունների համար անհրաժեշտ հմտությունների հասարակական ակտիվության խթանմանը: Ռազմական գիտելիքների ուսուցման և նախնական զինվորական պատրաստման լավագույն ձև է համայնքային, մարզային և հանրապետական խաղ-մրցույթների անցկացումը դպրոցների միջև; «Դպրոցական և զինվորական կոլեկտիվների համագործակցություն» ուղղությամբ աշխատանքը իրականացվում է ռազմակիրառական խմբակների և սեկցիաների ղեկավարման, ռազմական ճամբարների և ռազմադաշտային հավաքների համատեղ կազմակերպման, զորամասեր աշակերտների այցելությունների միջոցով: Արտադասարանական և արտադպրոցական նշված միջոցառումների դերը չթերագնահատելով՝ նշենք, որ ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացման կարևորագույն միջոցը դասն է: Նախնական զինվորական պատրաստության դասարանը դպրոցում հայրենասիրական աշխատանքի դաստիարակչական կենտրոնն է, ինչը հնարավորություն է տալիս համակարգել այդ աշխատանքները, ձևավորել դրական սովորույթներ: Նախնական զինվորական պատրաստության դասարանի բազայի վրա իրականացվում են. Պատմության, գրականության և այլ առարկաների դասաժամեր հայրենասիրական ուղղվածության թեմաներով:

.Դպրոցականների հանդիպումները զինծառայողների, վետերանների հետ:

.Արիության դասեր, երեկոներ, հավաքներ, զրույցներ, արտադասարանական ժամեր, տեսաֆիլմերի դիտում, ռազմակիրառական խմբակների պարապմունքներ:

Հանրակրթական դպրոցներն ահռելի անելիքներ ունեն հայրենասիրական դաստիարակության ուղղությամբ: Դրանցից ամենահիմնականը ռազմական կրրթության, պատմության, աշխարհագրության ու գրականության դասերի մեջ խնդրո առարկայի առումով նպատակաուղղված գործունեության ծավալումն է: Նախազորակոչային տարիքի պատանիների

զինվորական ծառայության հոգեբանական պատրաստակամությունը պետք է դիտարկել, որպես հայրենասիրական դաստիարակության կարևորագույն խնդիր: Ռազմագիտության դասերին, ռազմագիտական գիտելիքներ հաղորդելուն զուգահեռ, պետք է աշակերտներին տեղեկություն տրվի զինվորական ծառայության վերաբերյալ, թե ինչ օբեկտիվ հանգամանքներ կան բանակում, որոնց պետք է հարմարվի նորակոչիկը: Հայրենասիրական դաստիարակությունը պետք է դարձնել պետական անկախ համակարգ: Բոլոր հանրակրթական կրթօջախներում նպատակահարմարություն լինի, որպեսզի գործեն պատանիների նախազորակոչային պատրաստության(ՊՆՊ) համալիրները: Զորակոչն ու դեռահասների, պատանիների նախազորակոչային պատրաստության գոծընթացը, համարվում են համապետական ամենա11 կարևորագույն միջոցառումներ: Օրենսդրական կազմակերպչական տեսանկյունից դրանք իրականացվում են բավականին արդյունավետ, այսօր կարող ենք փաստել, որ զորակոչի գործընթացը դարձել է ամենաթափանցիկ, ամենաօբյեկտիվ համապետական միջոցառումը: Այստեղ կարևորվում են օրենքի գերակցության, սոցիալական արդարության սկզբունքները: Սակայն կարող ենք նաև փաստել, որ դեռևս ոչ կատարյալ կարելի է համարել նախազորակոչային պատրաստության գործընթացը: Ավագ դպրոցականների նախազորակոչային պատրաստությունը բազմամակարդակ, բազմապլանային գործընթաց է: Ավագ դպրոցի սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնական խնդիրների իրագործումը ենթադրում է համագործակցություն այն բոլոր պետական և հասարակական կառույցների միջև, որոնք հնարավոր կդարձնեն հետևյալ խնդիրների լուծումը.

.ավագ դպրոցականների ռազմահայրենասիրական և քաղաքացիական դաստիարակության բնագավառում պետական քաղաքականության իրականացման գործում յուրաքանչյուր քաղաքացու մասնակցություն

.հայրենասիրության զգացմունքի դաստիարակում, աճող սերնդի մոտ հայրենիքի, ծննդավայրի նկատմամբ պատասխանատվության, նրան ծառայելու պատրաստակամություն և հավատարմություն,

.հայրենիքի, ծննդավայրի պատմության և մշակույթի ուսումնասիրում,

. հայրենիքի պաշտպանների հիշատակը հավերժացնելու հետ կապված միջոցառումների նախապատրաստման և անցկացման գործում մասնակցություն,

.հայկական բանակի լավագույն ավանդույթների մասին տեղեկատվության փոխանցում,

.սովորողների ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական զարգացման, առողջ կենսակերպի

ձևավորում,

.երիտասարդների զինծառայությանը պատրաստելու գործում ակտիվ մասնակցություն: Առարկայական ուսուցիչների հետ համագործակցության արդյունքում անհրաժեշտ է միջառարկայական կապերի միջոցով ուսումնական նյութերը մատուցել նաև մանկավարժական և հայրենասիրական խնդիրների լուծման տեսանկյունից Օրինակ, անհրաժեշտ է հայոց պատմությունից հիշարժան իրադարձությունները՝ ճակատամարտերը, պատերազմները, հերոսների, զորավարների կյանքի, գործունեության, նրանց հոգեբանական կերպարները դարձնել ավելի ներկայանալի: Այն լի է օտար զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական, հերոսական պայքարի բազմաթիվ օրինակներով, որոնք դարեր շարունակ մշտապես մնացել են բազում սերնդների հիշողություններում, բարձր պահել նրանց մարտական ոգին, օտարերկրյա կեղեքիչների դեմ մղած ծանր պայքարում առաջադրել նորանոր հաղթանակների ձգտում: Կարևոր է, որպեսզի բարձրացվի ՆԶՊ դասընթացի վարկանիշը մեր դպրոցներում: Զինղեկը առաջին դասից սկսած պետք է աշակերտների գիտակցությանը հասցնի ռազմագիտության կարևորությունը, ձևավորի զինվորական ծառայության համար անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու ներքին մոտիվացիա, պահանջմունք: Զինղեկի գաղափարական համոզվածությունը, կարգապահությունը, համազգեստի, շարժուձևի ձգվածությունը, ռազմական գործի իմացությունը, պահանջկոտությունը, արդարացի վերաբերմունքը, հոգատարությունը աշակերտների նկատմամբ դրական վերաբերմունքը, կստեղծեն առարկայի, զինվորական ծառայության, զինվորական գործի նկատմամբ անհրաժեշտ վստահություն: Հայրենիքի պաշտպանությունը սեփական քաղաքացիների պարտականությունն է, քաղաքացիական, հայրենասիրական պարտքի կատարում: Հայրենասիրական զգացմունքները, իրենց ձևավորման սկզբնական փուլում հանդես են գալիս որպես սեր հայրենի երկրի նկատմամբ: Հայրենասիրական դաստիարակության գործընթացը պետք է նպատակաուղղված լինի սովորողի, անձի գիտակցության զգացմունքների, վարքի ձևավորմանը: Հերոսամարտերի, ազգային հերոսների, հայոց պատմության, հաղթանակի էջերի, պատերազմի հերոսների մասին: Անհրաժեշտ է հերոսներին ներկայացնել նաև նրանց կյանքը, գործունեությունը նաև խաղաղ ժամանակաշրջանում, ներկայացնելով նրանց բարոյական, կամքի և հերոսական գործողությունների դրտապատճառները՝ դրանով իսկ ներգործելով երեխաների հուզակամային ոլորտի վրա: Հայրենասիրությունը հասարակական գիտակցության բաղադրիչն է, որն արտահայտվում է խմբային զգացմունքներում, գնահատականներում, միջանձնային

հարաբերություններում, անձի կենսակերպի, ազգի պատմության, մշակույթի, պետության և հիմնական արժեքների համակարգի մեջ: Հայրենասիրությունն արտահայտվում է մարդու արարքներում և գործունեությամբ, այն միշտ կոնկրետ է և ուղղված է իրական օբյեկտներին, ձևավորվում է սեփական հայրենիքի նկատմամբ սիրո, պարտքի և պատասխանատվության զգացմունքների արդյունքում: Հայրենասիրության դրսևորումները լինում են անհատական, խմբային և զանգվածային : Այն դրսևորվում է պետության, քաղաքացու ամենօրյա վարքում, նրա կենցաղում: Հայրենասիրությունն ու քաղաքացիությունը իրենց մեջ ներառում են բարոյական զգացմունքների և վարքագծերի փոխկապակցված միասնությունը Հայրենիքի նկատմամբ սերը, քաղաքացիական կառույցների հետ հարաբերությունների օրինապահությունը, սեփական ազգի ավանդույթներին հետևելը, հայրենիքի պատմական հուշարձանների և սովորույթների նկատմամբ հոգատար վերաբերմունքը, կապվածությունը և սերը հարազատ վայրի նկատմամբ, հայրենիքի պատիվը և հեղինակությունը պահպանելու ձգտումը, այն պաշտպանելու պատրաստակամությունը և ընդունակությունը, մարտական խիզախությունը, այլ ազգերի մշակույթի և ավանդույթների նկատմամբ հարգանք, նրանց հետ համագործակցելու ձգտումը: «Ինչպես չկա մարդ առանց ինքնասիրության, այնպես էլ չկա մարդ առանց հայրենիքի»: Հայրենիքի նկատմամբ սերը, դաստիարակությունը տալիս է հուսալի բանալի դեպի մարդուն և հզոր հենարան նրա բնական, անձնային, ընտանեկան և ընդհանուր բարոյական հակումների դեմ պայքարի համար: Հայրենասիրական դաստիարակության գործընթացը պետք է լինի պլանավորված, համակարգված, անընհատ և պետական քաղաքականության ծրագրերում դաստիրակչական գործունեության ոլորտում առաջնային ուղղություններից մեկը: «Դպրոցականների հայրենասիրական դաստիարակության առաջատար դերը հայրենասիրության դաստիարկությունն է, որ սիրում է իր հայրենիքը, նվիրված է նրան, պատրաստ է իր աշխատանքով ծառայելու նրան ազատ էթնոմշակույթային միջավայրում և պաշտպանել նրա շահերը»: Հայրենասիրական դաստիրակության գործընթացը պետք է լինի պլանավոված, համակարգված, պետական քաղաքականության ծրագրերում դաստիարակչական գործունեության ոլորտում առաջնային ուղղություններից մեկը: «Հայրենասիրական դաստիարակությունը կազմում է ժամանակակից գործընթացի անհրաժեշտ բաղադրիչի մասը: Այն անխախտելիորեն կապված է քաղաքացիական, բարոյական, աշխատանքային դաստիարակության հետ, ունի հարաբերական ինքնուրույնություն»: Հայրենասիրական դաստիարակության խնդիր է ռազմահայրենասիրական դաստիարակությունը, որն ուղղված է զինծառայության՝ որպես պետական ծառայության հատուկ

ձևի նկատմամբ պատրաստակամության ձևավորմանը: Նորմատիվ-իրավական ապահովումը ենթադրում է օրենսդրական դաշտի, նորմատիվ բազայի կատարելագործում, հայրենասիրական դաստիարակության սոցիալ-իրավական հիմքերի սահմանում, կառավարության, գերատեսչության, կազմակերպության յուրաքանչյուր մարմնի դերի, տեղի, խնդիրների և գործառույթների հստակեցում, կրթության համակարգում հայրենասիրական դաստիարակության բազայի ստեղծում: Մանկավարժական և մեթոդական ապահովումը ենթադրում է հայրենասիրական դաստիարակության կազմակերպման և իրականացման հետ կապված ուսումնական և հատուկ ծրագրերի մեթոդիկաների մշակում, հայրենասիրական դաստիարակության մեթոդների և ձևերի զարգացում և կատարելագործում, ուսումնամեթոդական մշակումների արդյունքների ընդհանրացում և նորարարությունների մասին տեղեկատվության տրամադրում, գրականության ստեղծում՝ հաշվի առնելով նախ և առաջ հայրենասիրական և արտասահմանյան մանկավարժական փորձը, հումանիտար և դաստիարակչական ծրագրերի փորձաքննության անցկացումը: Աշխարհաքաղաքական ժամանակակից զարգացումների ֆոնին, էթնիկական ու կրոնական, միջազգային ահաբեկչության սպառնալիքների պայմաններում առաջնային դերակատարում է ստանձնում հայրենասիրության էությունն ու բնույթը, ըստ այդմ, կկարողանանք մեկնաբանել ռազմահայրենասիրական դաստիարակության նշանակությունը: Բնականաբար, տրամաբանական կլինի գիտականորեն հիմնավորված ձևերի ու միջոցների ընտրությունը:

…Բարոյական գիտակցության դրսևորման զգայական աստիճանի արտացոլման ձևերից մեկն է հասարակական ապրումների զգացմունքների խումբը: Վերջինիս էությունը արտացոլող արժեքներից է նաև հայրենասիրությունը: Այն՝ որպես կատեգորիա, արտացոլում է հասարակությունում տիրող, ինչպես նաև ազգային հոգևոր բարոյական մթնոլորտը: Անժխտելի է , որ հայրենասիությունը հանդիսանում է ազգի, ժողովրդի, հասարակության, պետության, սոցիալական հանրույթի, անհատի գոյատևման անբաժանելի բաղադրիչը, իսկ հասարակության և պետության դիաելեկտիկական գոյատևումն անհնար է պատկերացնել առանց այդ իսկ կառույցների միասնության, ամբողջականության, դինամիկ ու բարեհաջող զարգացման կարևորագույն պայման հայրենասիության : Հայրենասիրության դրսևորման բարձր մակարդակի հասնելն ու դրա պահպանելը բավականին բարդ ու շատ աշխատատար գործընթացներով խնդիր է: Հայրենասիրությունը ձևավորվում և զարգանում է որպես հոգևոր-բարոյականի հաստատմամբ առավել սոցիալիզացված զգացմունք: Հայրենասիրությունը՝ որպես իր բնույթով խորապես

սոցիալական երևութ, իրենից ներկայացնում է ոչ միայն հասարակական կյանքի որոշակի կողմ, այլ դրա գոյության և զարգացման էական աղբյուր: Հայրենասիրության առաջնահերթ սուբյեկտ է հանդիսանում անհատը, ում գերակա սոցիալ բարոյական խնդիրն է իր հայրենիքին, պատմական մշակութային, ազգային և հոգևոր պատակնելիության գիտակցումը՝ որպես կյանքի իմաստն ու բովանդակությունը որոշող բարձրագույն սկզբունք. Հայրենասիրության իմաստը դրա հոգևոր արժեքայնության մեջ է: Այն որպես վեհ զգացմունք, անփոխարինելի արժեք է, անսպառ աղբյուր: Շարադրվածի յուրատեսակ թանձրացումն է Նժդեհի իմաստասիրական ըմբռնումն առ այն, որ.«Այո՛, հայրենիքը՝ ընդհանուր աստվածություն, հայրենասիրություն, կրոն է»:

Հայրենասիրությունը կարելի է ձևակերպել որպես հասարկական կյանքի և պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների համակարգ, ինչը հանդիսանում է անձի կարևորագույն հոգևոր սեփականություն ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և դրսևորվում է իքնառեալիզացման ակտիվ գործընթացում ի շահ հայրենիքի բարօրության: Անտարակույս, հայրենասիությունը որոշակի առումով հանդես է գալիս որպես հասարակական ու պետական վերնաշենքի ինքնատիպ հիմք, գաղափարական հենարան:Այստեղից էլ այն համոզմունքը, որ հայրենասիրությունը չի կարող վերացական կերպով հանդես գալ, այսինքն լինել օբեյկտից ու սուբեյկտից դուրս: Հայրենասիրության օբեյկտը միանշանակ թանձրացված հայրենիքն է իր ամբողջ էությամբ ու բովանդակությամբ: Հայրենասիրության սուբյեկտի դերում հանդես են գալիս սոցիալական կառույցները՝ անձը, սոցիալական հանրույթը , դասակարգը, ազգը և այլն:Այստեղ երևան է գալիս հայրենասիրությունն ու սուբեյկտը մեկ հարթության բերող և իրար շաղկապող գործառույթի անհրաժեշտությունը հայրենասիրական, մասնավորապես՝ ռազմահայրենասիրական դաստիարակություն անվամբ:

Ժամանակակից հասարակության մեջ երիտասարդության հայրենասիրական դաստիարակությունն առանձնակի կարևորություն է ձեռք բերում մի քանի պատճառներով բարձրանում է նոր սերնդի տեղեկացվածության մակարդակը, ժողովրդավարացման գործընթացները և քաղաքական կյանքում բազմակուսակցական համակարգի գոյությունը որոշակի դժվարություններ են ստեղծում՝ ըմբռնելու հայրենասիրության էությունը: Անհրաժեշտություն է առաջանում երիտասարդության հայրենասիրական դաստիարակությունն իրականացնել որակապես նոր մակարդակով:

Հայրենասիրության կառուցվածքում առանձնանում են մի քանի փոխկապակցված

բաղադրատարրեր՝ մտավոր, պահնջմունքաշարժառիթայի, հուզակամյին և գործնական:

Մեր երկրում տեղի ունեցող արմատական վերափոխումններն իրենց հետքն են թողնում հասարակության կյանքի տարբեր ոլորտների, այդ թվում՝ երիտասարդ սերնդի վրա , ինչը պայմանավորվում է ժամանակակից պայմաններում հայրենասիրության բովանդակության առանձնահատկությունների բացահայտման անհրաժեշտությունը: Ժամանակակից պայմաններում հայրենասիրության բովանդակության կարևոր առանձնահատկությունն է նրա միտվածությունը դեպի ապագան: Իր հայրենքիքին նվիված մարդն անմիջականորեն մասնակցում է նրա առջև ծառացած խնդիրների լուծմանը; Տնտեսության վերելքը ժողովրդավարական պետության կայացումը ուղղակիորեն կախված են հասարակության անդամի՝ իր հայրենասիրական պարտքի կատարումից, որն իրականացվում է ոչ միայն հերոսական արարքների միջոցով այլ նաև ամենօրյա գործերով: Դա պայմանավորվում է ժամանակակից հայրենասիրության ևս մեկ առանձնահատկությամբ. Իսկական հարենասիրությունը դասվում է համամարդկային արժեքների շարքը: Հայրենասիրական դաստիարակությունը մեր կողմից դիտվում է որպես դաստիարակների և սանների փոխգործակցության գործընթաց, որն ուղղված էհայրենասիրական զգացմունքների ձևավորմանը հայրենասիրական համոզմունքների և վարքագծի մշակմանը: Հայրենասիրական դաստիարակության նպատակն ու արդյունքը հայրենասիրության ձևավորումն ու զարգացումն է: Ընդ որում՝ էական է հասարակական փորձի փոխանցումը սերնդին՝ որպես անձնական ձեռքբերում, ինչն արտացոլում է դաստիարակության գործընթացի էությունը՝ արտաքինի, օբյեկտիվ փոխադրումը ներքին, սուբյեկտիվ աշխարհ: Հայրենասիրական դաստիարակությունն իրականացվում է դաստիարակչական աշխատանքի մյուս ուղությունների հետ միասին այն փոխկապակցված է քաղաքացիական դաստիարակության հետ, սակայն, մեր կարծիքով առավել նպատակահարմար է հայրենասրիական դաստիարակությունը դիտել ոչ թե որպես վերջինիս մաս այլ որպես դաստիարակչական աշխատանքի ինքնուրույն ուղղություն:

4.Եզրակացություն

Մեր երկրում տեղի ունեցող արմատական վերափոխումներն իրենց հետքն են թողնում հասարակության կյանքի տարբեր ոլորտների, այդ թվում՝ երիտասարդ սերնդի վրա; Ճիշտ է, այսօր ունենք կանոնավոր,մարտունակ և պրոֆեսիոնալ բանակ:Սակայն պակաս չէ դպրոցի դերը աշակերտի՝ապագա զինվորի ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Ուսուցիչ լինելը,ինչ խոսք,հաճելի և միևնույն ժամանակ պարտավորեցնող է:

Դասի դաստիարակչական նպատակները պետք է կոնկրետ ձևակերպել՝ հետաքրքրություն առաջացնել, աշակերտներին մղել ակտիվության, աշակերտներին մոտիվացնել, աշխարհայացքի ձևավորել…

Դաստիարակչական նպատակները նպաստում են գիտելիքների, ուսուցման գործընթացի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը, մտահանգումներին, հայացքների ու տեսակետների անձնային որակների, ինքնագնահատման և ինքնուրույնության ձևավորմանը, ցանկացած հասարակության մեջ պատշաճ վարքագծի, փորձի ձեռքբերմանը:

Դաստիարակչական բաղադրիչն իր մեջ ներառում է.

- Բարոյական և էսթետիկական պատկերացումներ, համակարգված աշխարհայացք, վարքի կանոններին հետևելու և օրենքների կատարման կարողություն,
- Աշակերտի կարիքները, սոցիալական վարքի մոտիվացիան, արժեքները և արժեքային կողմնորոշումը, աշխարհայացքը:

Բանակում, իհարկե հույսը չի դրվում դպրոցում ստացած ռազմական գիտելիքների վրա,սակայն,երբ զորակոչիկը բանակ է գնում պատրաստակամ, հայրենասիրությամբ լցված,ապա դա միանշանակ դպրոցի ջանքերի մասին է խոսում: Ռազմաճակատ մեկնողների կամք, հայրենասիրություն ու նպատակասլացություն ունենալը պարտադիր, բայց ոչ բավարար պայմաններ են պատերազմում հաղթելու համար:Սակայն զինվորի բարոյական ոգին ի զորու կլինի հրաշքներ գործել միայն զենք բռնել սովորելուց հետո: Յուրաքանչյուր տղամարդ պետք է կարողանա զենք բռնել,զենքին տիրապետել:Դե իսկ դպրոցում իմ աշակերտները քաջ գիտակցում են,որ զենքին պարտավոր են տիրապետել,որովհետև ունեն վեհ նպատակ՝ ծառայել հայրենիքին,իսկ ինձ համար ամենաուրախալին այն է,որ նրանք սպասում են դրան անհամբեր:Ու առավել հաճելի է,երբ գիտակցում եմ,որ այս հարցում ես էլ

ունեմ իմ ներդրումը: Ու մեզանից յուրաքանչյուրը պետք է գիտակցի մեկ պարզ ճշմարտություն. մենք ենք մեր հայրենիքի սրի ու վահանի կենդանի մարմնացումը, մենք ենք մեր երկրի այսօրվա պաշտպանը, մենք ենք գալիք սերունդների համար պայծառ ապագա կերտողը...

Նման ծրագրային մոտեցումները հնարավորություն կընձեռեն հայրենասիրական դաստիարակության աշխատանքի շնորհիվ ունենալու

1. Համընդհանրացման պայմաններում ՀՀ քաղաքացու ազգային դիմագծի, ինքնության, լեզվի, մշակույթի ու ավանդույթների պահպանումը,

2. Պետության պաշտպանունակության, ազգային անվտանգության և ռազմական հզորության ամրապնդում և զարգացում,

3.Հայրենիքի պաշտպանությանն անմիջականորեն մասնակցելու համար պատասխանատվության ձևավորում,

4.Ազգային արժանապատվության, իր ընտանիքի, ազգի և պետության համար հպարտության զգացում, ինչպես նաև իր սահմանադրական և քաղաքացիական պարտքը կատարելու պատրաստակամություն,

5. Աճող սերնդի հայրենասիրական դաստիարակության հիմնահարցը հրատապ է մարդկային հասարակության զարգացման բոլոր փուլերում: Ներկայումս , մեր հասարակության կյանքի բոլոր ոլորտներում արմատական վերափոխումների հետ կապված հիմնահարցը հատուկ նշանակություն է ձեռք բերում: Քաղաքականության տնտեսության, կրթության մեջ տեղի ունեցող փոփոխությունները պահանջում են

«հայրենասիրություն» հասկացության էության և բովանդակության հատուկ վերլուծություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խաչատրյան Ս, Պետրոսյան Ս., Արնաուդյան Ա., Զոհրաբյան Ա., Առաքելյան Մ., Խաչատրյան Հ., Վարելլա Գ.,«Հասարակագիտության ուսուցման արդի հիմնահարցեր. ձեռնարկ մանկավարժների համար» Երևան «Տիգրան Մեծ» 2005թ.
2. «Մխիթար Գոշ» ուսումնամեթոդական հոդվածների ժողովածու Վանաձոր2014թ.
3. Վ.Ա.Մուրադյան «Ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնական դրույթները հանրակրթական դպրոցում» ԳՊՄԻ 2010թ.
4. Հայկ Խաչատրյան ,,Հազարագիտարան՛՛, Երևան, 2003 թ.
5. Ամիրջանյան Յու.Ա.Սահակյան (ուսում.ձեռնարկ) 2004թ